



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/155-2023

ՀՀ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 ԿՄ, 90 + 191 ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

20 հուլիսի 2023 թվական

**ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝**

Փոխվարչապետ (խորհրդի նախագահ)

Տ. Խաչատրյան

**ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝**

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Գ. Սանոսյան

Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակի ղեկավար

Ա. Աղիլխանյան

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

Ք. Ղալեյան

Արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Հարությունյան

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Տ. Գաբրիելյան

Էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ա. Իսախրյան

Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ

Ա. Գուգարաց

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ

Լ. Հովհաննիսյան

Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդական

Ա. Սարգսյան

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար

Վ. Կարապետյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն

Գ. Ավետիսյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ

Ն. Զուլայան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի սոցիալական ազդեցությունների և վերաբնակեցման կառավարման բաժնի ղեկավար

Լ. Դիլանյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի խորհրդական

Տ. Ասատրյան

## ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

**Օրակարգային 1-ին հարց՝** Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 4 Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի տարաբնակեցման շրջանակի վերաբերյալ

**1. Զեկույց ներկայացրեց՝** «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի սոցիալական ազդեցությունների և վերաբնակեցման կառավարման բաժնի ղեկավար Լիլիթ Դիլանյանը՝ տեղեկատվություն ներկայացնելով Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 4-ի շրջանակներում Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման ներդրումային ծրագրի վերաբերյալ: Նշվեց, որ ծրագրի ֆինանսավորման նպատակով հայտ է ներկայացվել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին, Ասիական զարգացման բանկին և Եվրոպական ներդրումային բանկին: Ծրագրի նախապատրաստական փուլում վերոնշյալ բանկերի հետ համաձայնեցվել է հողերի օտարման և տարաբնակեցման գործընթացը ՎԶԵԲ-ի բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը համահունչ իրականացնելու պայմանը: Միաժամանակ ծրագրի շրջանակներում սոցիալական ազդեցությունների գնահատման նպատակով ՎԶԵԲ-ի կողմից վարձված խորհրդատու կազմակերպությունը (Ecoline, ATMS and SE Solutions Consortium) մշակել է տարաբնակեցման շրջանակը, որը ենթակա է համաձայնեցման ՀՀՃՄՆԾ կառավարման խորհրդի հետ: Լիլիթ Դիլանյանը հայտնեց, որ անդրադարձ է կատարվել մի քանի սկզբունքային հասկացությունների, ինչպիսիք են՝ փոխհատուցման ենթակա սուբյեկտներ (սեփականատեր, այլ գույքային իրավունք ունեցող անձինք, չձևակերպված օգտագործող, ձեռնարկատեր, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ազդեցության ենթակա անձ՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից, ազդակիր բիզնեսի գրանցված աշխատողներ և այլն):

տողներ), փոխհատուցման տեսակներ (հողի, բնակելի և ոչ բնակելի շենք-շինությունների, բերք-մշակաբույսերի և ծառերի, բիզնեսի, աշխատանքի, հանրային շենքի, կառույցի կորուստներ, կոմունալ ծառայությունների տեղափոխման հետ կապված հարցեր, ժամանակավոր ազդեցություններ), օժանդակության տեսակներ (խիստ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների, խոցելիության, տեղափոխման, կենսաապահովման միջոցների վերականգնման օժանդակություն): Նշվեց, որ, ի տարբերություն նախկին տարաբնակեցման շրջանակի, այժմ շրջանակը ներառում է բոլոր 3 բանկերի բնապահպանական և սոցիալական քաղաքականության սկզբունքները և միևնույն ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում կենսաապահովման միջոցները կորցնելու դեպքում տնային տնտեսություններին հատկացվող օժանդակություններին: Հավելեց, որ ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N 981-Ն որոշմամբ նախագծի օտարման գոտու սահմաններում գտնվող հողամասերը ճանաչվել են հանրության գերակա շահ: Տարաբնակեցման ծրագրի պատրաստման նպատակով խորհրդատուի կողմից իրականացվել են դաշտային հետազոտություններ, մասնավորապես՝ ազդակիր գույքի տեղազննում, չափագրում, գույքագրում, գնահատում, սոցիալ-տնտեսական հարցում և մարդահամար: Տարաբնակեցման ծրագրի համաձայն՝ օտարման գոտու սահմաններում է գտնվում 590 հողամաս, որից 276-ը՝ մասնավոր սեփականություն, 254-ը՝ համայնքային, իսկ 40-ը՝ պետական, ազդակիր են նաև 11 շենք-շինություններ, որոնցից 2-ը՝ բնակելի, 3-ը՝ հասարակական, 6-ը՝ գյուղատնտեսական նշանակության, 4 բիզնեսներ, որոնցից 2-ը՝ գազալցակայաններ, իսկ 2-ը՝ սննդի օբյեկտներ, ինչպես նաև 8870 ծառ՝ տեղակայված 140 հողամասերում և 1556 անձ՝ ներառված 392 տնային տնտեսություններում: Ըստ հաշվարկների՝ տարաբնակեցման ծրագրի բյուջեն կկազմի շուրջ 3,057,672,775.55 դրամ, որը ներառելու է բոլոր կորուստների, նպաստների և օժանդակությունների փոխհատուցումը, ինչպես նաև չնախատեսված ծախսերը:

**2. Որոշվեց՝** հավանություն տալ օրակարգային 1-ին հարցին:

**3. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝**

1) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանին՝ ՀՀ կառավարության կողմից ոչ միջազգային ծրագրերով իրականացրած բոլոր այն դեպքերը, որոնք պետք է ենթակա լինեին փոխհատուցման, սակայն փոխհատուցման ենթակա չեն դարձել ո՛չ ազգային, ո՛չ միջազգային կանոններով, և որոնք վերաբերում են նախորդ 5 տարիներին՝ սկսած 2018 թվականից, դուրս բերել՝ նշելով, թե միջազգային կանոններով նախորդ ծրագրերում գնահատում իրականացրած լինելու դեպքում Կառավարությունից որքան լրացուցիչ ծախս կպահանջվեր և ներկայացնել Կառավարության քննարկմանը:

#### **4. Ձեռք բերվեց հետևյալ պայմանավորվածությունը՝**

1) «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանն աշխատանքային կարգով Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանին կներկայացնի ծառերի գնահատման մեթոդաբանության, ինչպես նաև գնահատման չափերի վերաբերյալ տեղեկատվություն:

**Օրակարգային 2-րդ հարց՝** Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի - Ծրագիր 3-ի շրջանակներում թիվ T3-CW-01 պայմանագրի շրջանակներում կապալառու ընկերության կողմից Վեճերի միանձնյա խորհուրդ ներկայացված թիվ 4 դիմումի վերաբերյալ

**1. Զեկույց ներկայացրեց՝** «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի խորհրդական Տաթևիկ Ասատրյանը՝ տեղեկատվություն ներկայացնելով 2023 թվականի մայիսի 9-ին Սինոհիդրո Քորփորեյշըն Լիմիթիդ ընկերության՝ թիվ T3-CW-01 պայմանագրի շրջանակներում (Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3, Թալին-Լանջիկ ճանապարհահատված) Վեճերի միանձնյա խորհուրդ ներկայացրած թիվ 4 դիմումի վերաբերյալ: Նշվեց, որ դիմումով կապալառուն Վեճերի խորհրդից խնդրել է որոշում կայացնել առ այն, որ պատվիրատուն որպես ցեմենտբետոնե պատվածքից ասֆալտբետոնե պատվածքի փոփոխության արդյունք պետք է վճարի կապալառուին հավելյալ վճարներ, ընդհանուր՝ 8,515,651.86 ԱՄՆ դոլար: Քննարկումների ընթացքում պատվիրատուի կողմից բարձրացվել է դիմումով ներկայացված հարցը ՎԽ քննությանը ենթակա չլինելու վերաբերյալ դիրքորոշում, ի թիվս այլի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կապալառուն չի ներկայացրել որևէ հավաստում կողմերի միջև վեճի

առկայության մասին, ինչպես նաև չի պահպանել պայմանագրով սահմանված ընթացակարգային նորմերը, այն է՝ սահմանված ժամկետում պահանջի ծանուցում, պահանջի ներկայացում ինժեներին, ինժեների կողմից կողմերի մասնակցությամբ քննարկումների իրականացում, ինժեների կողմից որոշման կայացում: Անդրադարձ կատարվեց նաև նրան, որ պատվիրատուի կողմից դիմումի շրջանակներում գործընթացները վարելու համար ներգրավվել են ծրագրի տեխնիկական հսկողությունն իրականացնող IRD ընկերության փորձագետները: Խորհրդականը հայտնեց, որ 2023 թվականի հունիսի 12-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից գրություն է ներկայացվել Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչին՝ խնդրելով վերջինիս ներգրավվածությունը գործընթացին, ինչպես նաև պատվիրատուի շահերի արդյունավետ պաշտպանությունն իրականացնելու համար տրամադրելու հնարավոր իրավաբանական կազմակերպությունների վերաբերյալ տվյալներ: Այս համատեքստում՝ Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի հետ հանդիպման ընթացքում վերջինս առաջարկել է միջոցներ ձեռնարկել հարցը բանակցություններով լուծելու ուղղությամբ և հայտնել իր պատրաստակամությունը աջակցելու դրա անցկացմանն ու կազմակերպմանը, իսկ 2023 թվականի հունիսի 28-ի գրությամբ ներկայացրել է իրավաբանական անձանց շրջանակ և վերահաստատել հարցը բանակցություններով լուծելու առաջարկն ու դրանք կազմակերպելու պատրաստակամություն: 2023 թվականի հունիսի 19-ին կապալառուին է ներկայացրել ՎԽ գործընթացը կասեցնելու և հարցը բանակցություններով լուծելու առաջարկ: 2023 թվականի հունիսի 20-ին կայացած քննարկումների արդյունքում կապալառուն դիրքորոշում է հայտնել, որ ընդհանուր առմամբ չի առարկում բանակցությունների միջոցով հարցի կարգավորմանը, սակայն իր վերջնական որոշումը կհայտնի մինչև հունիսի 21-ը՝ աշխատանքային օրվա ավարտը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամանակացույցի համաձայն կապալառուն պարտավոր է ներկայացնելու դիմումի պատասխան, և այն հանգամանքը, որ մինչև աշխատանքային օրվա ավարտը կապալառուն չի ներկայացրել իր դիրքորոշումը, 2023 թվականի հունիսի 21-ին պատվիրատուն կապալառուին է ներկայացրել գրություն, որով կապալառուի լուծությունը դիտարկել է որպես հունիսի 19-ի գրությամբ ներկայացված առաջարկի մերժում: Այնուհետև նշվեց, որ 2023 թվականի հունիսի 21-ին ՎԽ է ներկայացվել պատվիրատուի՝ դիմումի պատասխանը, ինչպես նաև կապալառուի

կողմից ներկայացված ուշացման վերլուծության վերաբերյալ պատասխանը: Պատվիրատուն ներկայացրել է իր հիմնավորումները, որով ՎԽ-ին խնդրել է մերժել կապալառուի պահանջները: Ներկայացված ուշացման վերլուծությունների վերաբերյալ պատվիրատուն հիմնավորումներ է ներկայացրել, որ կապալառուի կողմից կատարված վերլուծությունները սխալ են: 2023 թվականի հուլիսի 1-ին կապալառուն ներկայացրել է պատվիրատուի SoD-ի, ինչպես նաև ուշացման վերլուծությունների վերաբերյալ պատասխանի արձագանքը: 2023 թվականի հուլիսի 11-ին պատվիրատուն ՎԽ է ներկայացրել կապալառուի RSoD-ի և ուշացման վերլուծության վերաբերյալ իր դիրքորոշումը (RRSoD): Ի պատասխան 2023 թվականի հուլիսի 11-ի պատասխանի՝ 2023 թվականի հուլիսի 12-ին կապալառուն ներկայացրել է որոշակի հիմնավորումներ առ այն, իբր պատվիրատուն իր պատասխանով ներկայացրել է նոր փաստեր և խնդրել ՎԽ-ին տալ հակադարձման հնարավորություն: Ի պատասխան վերոգրյալի՝ պատվիրատուն 2023 թվականի հուլիսի 11-ին ներկայացրել է իր առարկությունը՝ մատնանշելով նաև կապալառուի կողմից անբարեխիղճ վարքագծի դրսևորման, ընթացակարգը խախտելու, ինչպես նաև նախապես՝ մինչև ՎԽ որոշումը՝ հակադարձման հնարավորության հաստատման, գրությամբ դիրքորոշում ներկայացնելու վերաբերյալ: 2023 թվականի հուլիսի 13-ին ՎԽ-ն կայացրել է որոշում և սահմանել միաժամանակյա հակադարձման հնարավորություն և պատասխանի հնարավորություն՝ համապատասխանաբար մինչև 2023 թվականի հուլիսի 17-ը և 19-ը, որից հետո՝ հուլիսի 20-ին, ՎԽ-ն կփակի վարույթը և կտրամադրի իր որոշումը 2023 թվականի օգոստոսի 1-ին: Տաթևիկ Ասատրյանը հավելեց, որ ՎԽ գործընթացի հետագա ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև դրա արդյունքում պատվիրատուի կողմից ակնկալվող գործողությունների վերաբերյալ դիրքորոշումները կներկայացվեն խորհրդին ի լրումն:

**2. Որոշվեց՝** ընդունել ի գիտություն օրակարգային 2-րդ հարցը:

### **3. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝**

1) «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանին՝ սույն թվականի օգոստոս ամսին խորհրդին ներկայացնել Վեճերի խորհրդի եզրակացությունը վարույթի վերաբերյալ՝ գործընթացի հետագա ընթացքը քննարկելու նպատակով:

**Օրակարգային 3-րդ հարց՝** Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվող Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի Հատված A և B կառուցման համար Երևանի քաղաքապետարանի և «Լևանտինա Ինվեստիա» ընկերության միջև (մեկ աղբյուրից գնման մեթոդով) պայմանագրի կնքման վերաբերյալ հարցի քննարկում և հաստատում

**1. Զեկույց ներկայացրեց՝** «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Վարդան Կարապետյանը՝ տեղեկատվություն ներկայացնելով Երևանի քաղաքապետարանի և «Լևանտինա Ինվեստիա» ընկերության միջև կնքվելիք պայմանագրի վերաբերյալ: Նշվեց, որ Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի կառուցման համար 2017 թվականի դեկտեմբերի 11-ին պայմանագիր է կնքվել Երևանի քաղաքապետարանի և իտալական Տիրենա Սքավի ընկերության միջև: 2021 թվականի հուլիսի 31-ին կապալառուն ավարտել է ամբողջ ճանապարհահատվածի Հատված C-ի կառուցումը: Աշխատանքները շարունակվել են Հատված A-ում և B –ում:

2023 թվականի մարտի 6-ին պատվիրատուն կապալառուի սնանկության կառավարիչների կողմից տեղեկացվել է, որ իտալական Լուկկայի դատարանը կապալառուին սնանկ է ճանաչել: Միաժամանակ սնանկության կառավարիչները առաջարկել են պայմանագիրը փոխանցել պայմանագրի իրականացման ընթացքում հաստատված ենթակապալառու «Խաչհար» ՍՊԸ-ին: Երևանի քաղաքապետարանի կողմից մշակվել է պայմանագրի փոխանցման նախնական տարբերակը: Միաժամանակ հաշվի առնելով սնանկության գործոնը՝ համաձայն պայմանագրի գլխավոր պայմանների, ինչպես նաև Ասիական զարգացման բանկի համաձայնությամբ՝ 2023 թվականի մայիսի 29-ին պատվիրատուն կապալառուին է ներկայացրել պայմանագրի խզման գրությունը և առաջարկել պայմանագիրը փոխանցել «Խաչհար» ՍՊԸ-ին՝ համաձայն մշակված նախնական տարբերակի: Կապալառուի կողմից պատվիրատուի առաջարկը մերժվել է: Երևանի քաղաքապետարանը դիմել է «Խաչհար» ՍՊԸ-ին (որպես Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի կառուցման պայմանագրի հաստատված ենթակապալառու)՝

առաջարկելով առ այսօր չիրականացված ծավալների մասով մեկ աղբյուրից գնման մեթոդով պայմանագիր կնքել վերջինիս հետ, որը մերժվել է «Խաչհար» ՍՊԸ-ի կողմից:

Հաշվի առնելով Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի կարևորությունը և Ասիական զարգացման բանկի կողմից տրամադրված Տրանշ 2-ի հասանելիության սուղ ժամկետները՝ ներկայումս Երևանի քաղաքապետարանն առաջարկում է առ այսօր չիրականացված ծավալների մասով մեկ աղբյուրից գնման մեթոդով պայմանագիր կնքել «Լևանտինա Ինխիներիա» Ս. Լ ընկերության հետ, քանի որ «Լևանտինա Ինխիներիա» Ս. Լ ընկերությունը ներկայումս միակ ընկերությունն է, որը հանդիսանում է գործող կապալառու՝ Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում:

Վարդան Կարապետյանը տեղեկացրեց, որ «Լևանտինա Ինխիներիա» Ս. Լ ընկերությունը կառուցել է Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածը և իրականացրել է Բաբաջանյան 1 կմ հատվածի վերակառուցումը: Շինարարական աշխատանքների ընթացքում կապալառուն ցուցաբերել է բարձր մասնագիտական կարողություններ և սահմանված ժամկետում ավարտել է ինչպես Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի կառուցումը, այնպես էլ Բաբաջանյան 1 կմ հատվածի վերակառուցումը: Նշվեց նաև, որ առաջարկվող պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 3,731,450.80 ԱՄՆ դոլար (ներառյալ ԱԱՀ-ն), իսկ իրականացման վերջնաժամկետը 2023 թվականի հոկտեմբերի 31-ն է: Սույն առաջարկը ուղարկվել է նաև Ասիական զարգացման բանկի հաստատմանը, որի հաստատումն ստացվել է սույն թվականի հուլիսի 12-ին:

**2. Որոշվեց՝** հավանություն տալ օրակարգային 3-րդ հարցին:

**Օրակարգային 4-րդ հարց՝** Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվող Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների վերահսկողության CS/10 պայմանագրի Առաջադրանք 1-ում ժամկետի փոփոխության և համապատասխան մասնագետների ներգրավվածության և Առաջադրանք 2-ում մասնագետների ներգրավվածության փոփոխության վերաբերյալ հարցի քննարկում և հաստատում

**1. Զեկույց ներկայացրեց՝** «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավարի

ժամանակավոր պաշտոնակատար Վարդան Կարապետյանը՝ տեղեկատվություն ներկայացնելով պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Նշվեց, որ Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում ներկայումս շինարարական աշխատանքներ են իրականացվում Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածում, իսկ Ա. Բաբաջանյան 1 կմ փողոցի վերակառուցման մասով ներկայումս իրականացվում են կատարված շինարարական աշխատանքների փաստաթղթավորման աշխատանքները: Նշված երկու դեպքում էլ շինարարական աշխատանքների վերահսկողությունը իրականացվում է Երևանի քաղաքապետարանի և «Էջիս Ինժեքնեյշնլ և Կոքս Քոնսալթ» ՀԶ-ի միջև 2017 թվականի ապրիլի 12-ին կնքված CS/10 պայմանագրի համաձայն:

Վարդան Կարապետյանը հայտնեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվում է մեկ աղբյուրից գնման մեթոդով պայմանագիր կնքել Երևանի քաղաքապետարանի և «Խաչհար» ՍՊԸ-ի միջև և շինարարական աշխատանքների իրականացման պայմանագրի վերջնաժամկետ սահմանել 2023 թվականի հոկտեմբերի 31-ը՝ տեխնիկական վերահսկողությունն ապահովելու համար անհրաժեշտ է CS/10 պայմանագրի Առաջադրանք 1-ում աշխատանքների իրականացման ժամկետը նույնպես երկարաձգել մինչև 2023 թվականի հոկտեմբերի 31-ը, և կատարել համապատասխան մասնագետների ներգրավվածության ավելացում: Այս համատեքստում Բաբաջանյան 1 կմ ճանապարհահատվածի տեխնիկական վերահսկողության իրակա-նացման մասով անհրաժեշտություն է առաջացել CS/10 պայմանագրի Առաջադրանք 2-ում ավելացնել որոշ մասնագետների ներգրավվածությունը՝ մինչև շինարարական աշխատանքների ավարտն անհրաժեշտ տեխնիկական վերահսկողությունն ապահովելու համար: Նշվեց նաև, որ վերոհիշյալ CS-10 պայմանագրի փոփոխության կազմմամբ պայմանավորված անհրաժեշտ հավելյալ ծախսերը կազմում են ընդհանուր 176,908.8 ԱՄՆ դոլար և 86,800 եվրո: Արդյունքում Երևանի քաղաքապետարանը առաջարկվում է կնքել CS/10 պայմանագրի թիվ 16 փոփոխությունը:

**2. Որոշվեց՝** հաստատել Երևանի քաղաքապետարանի և ՀԶ «Էջիս Ինժեքնեյշնլ և Կոքս Քոնսալթ» միջև կնքված CS/10 պայմանագրի թիվ 16 փոփոխությունը՝ ընդհանուր 176,908.8 ԱՄՆ դոլար և 86,800.0 եվրո գումարի ավելացմամբ և Առաջադրանք 1-ի ժամկետը մինչև

2023 թ. հոկտեմբերի 31-ը երկարաձգմամբ, ինչպես նաև թույլ տալ Երևանի քաղաքապետարանին կնքել CS/10 պայմանագրի թիվ 16 փոփոխությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ